ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3893-Ա « 07 » օգոստոսի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆՆ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՆՅՈՒ ՋԵՐՍԻ
ՆԱՀԱՆԳ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գևորգ Ղարիբյանի 05.08.2026 թվականի № Ն/51486-26 գրությունը, Steam Works Studio ՍՊԸ-ի տնօրեն Դինեշ Ջ.Շարմայի հրավերը՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների կրթական ծրագրի շրջանակներում STEAM ամառային ճամբար ծրագրին մասնակցելու նպատակով.

1.Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը՝ 2026 թվականի օգոստոսի 9-ից 15-ը ներառյալ գործուղել Ամերիկայի Միացյալ Նահանգների Նյու Ջերսի նահանգ՝ հետևյալ կազմով.

Գևորգ Ղարիբյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար
Կարինե Մուրադյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության երեխաների պաշտպանության բաժնի պետ

2.Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերը վճարվելու են ծրագրի շրջանակներում:

3.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գևորգ Ղարիբյանի, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության երեխաների պաշտպանության բաժնի պետ Կարինե Մուրադյանի բացակայության ընթացքում պարտականությունների կատարումը

վերապահել նույն վարչության պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Վահե Գրիգորյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246